Արձանագրություն N 2

ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով ապրանքների ձեռքբերման հրավերի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 10 հոկտեմբերի 2025թ.

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Սարգսյանը, անդամներ՝ Աշոտ Բաղդասայանը, Ավագ Սարգսյանը և քարտուղար՝ Նվարդ Ավագյանը

Օրակարգ

1. ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման հարցման մասին

1.1 ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Արթուր Սարգսյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ 2026 թվականի հունվարի 7-ին և հունվարի 8-ին e-auction համակարգի միջոցով ստացվել են հրավերի պարզաբանման վերաբերյալ հարցումներ, մասնավորապես՝

ՀԱՐՑՈՒՄ 1. 1. Տեխնիկական բնութագրում նշել եք՝ Փոքրաձավալ բեռնատարներ (պիկապներ) կամ MITSUBISHI L200, կամ NISSAN NAVARA, կամ JAC T9 և թվարկել եք մեքենայի տեխնիկական չափանիշներ, որոնք կարող են մասամբ չհամապատասխանել ձեր կողմից նշված մեքենայի մոդելներին կամ համապատասխանել դրանցից միայն մեկին: Արդյո՞ք նշված մոդելներից որևէ մեկով մրցույթին մասնակցելու պարագայում անհրաժեշտ է որպեսզի այդ մոդելների տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանի նաև ձեր կողմից թվարկված բնութագրերին: Եթե այո, ապա նշանակում է, որ մրցույթի տեխնիկական բնութագիրը սխալ է կազմված: 2. Տեխնիկական բնութագրում նշված է՝ Մատակարարը Երևան քաղաքում պետք է ունենա պաշտոնական ներկայացուցչություն և պաշտոնական սպասարկման կենտրոն: Արդյո՞ք Երևան քաղաքի սահմաններին կից սպասարկման կենտրոն ունենալը կդիտարկվի որպես նշվածին բավարարող պայման:

ՀԱՐՑՈՒՄ **2**. Հարգելի գործընկեր, խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին. 1. Ինչո՞վ է պայմանավորված պահանջված մեքենայի տվյալ 3 կոնկրետ մոդել լինելը, այն դեպքում երբ այլ մոդելներ ևս համապատասխանում են ներկայացված տեխնիկական պահանջին, բայց Ձեր կողմից նշված մոդելներից չեն և հետևաբար չեն կարող մասնակցել մրցույթին(այսինքն տեխնիկական պահանջին համապատասխանող առավելագույնը կարող է լինել 3 մասնակից) 2. Մատակարարին պահանջ է ներկայացված Երևան քաղաքում ունենալ պաշտոնական ներկայացուցչություն և պաշտոնական սպասարկման կենտրոն(այսինքն լինել ավտոարտադրողի պաշտոնական դիստրիբյուր, ոչ թե դիլեր), սակայն Ձեր նշած 3 մոդելների ավտոարտադրողներից միայն երկուսն են պաշտոնական ներկայացված Հայաստանում(հնարավոր մասնակիցների առավելագույն թիվը դարձավ 2), որոնցից միայն մեկն է գտնվում Երևանում և Ձեր նշած մոդելին հասանելիություն չունի(տեխնիկական պահանջին համապատասխանող հնարավոր մասնակիցների թիվը 0), 3.Տեխնիկական պահանջում նշված է "Ապրանքը պետք է համապատասխանի որակի նկատմամբ պահանջներին, որոնք սահմանվում են տեխնիկական կանոնակարգով, ստանդարտացման ոլորտում փաստաթղթերին, պետական ստանդարտներին, որոնք կիրառվում են այդպիսի ապրանքների համար", Քանի որ ՀՀ-ն հանդիսանում

է Եվրասիական տնտեսական միության անդամ երկիր, ուստի ՀՀ տարածք մեքենաների ներմուծման և շահագործման հարաբերությունները կարգավորված են համապատասխան օրենսդրական ակտերով, մասնավորապես. Մաքսային միության անդամ երկիր մատակարարված ապրանքները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հիշատակված Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին (OTTC): 2018թ հունվարի 1-ից ավտոմեքենաների բոլոր տեսակները, ներառյալ՝ բեռնատար և մարդատար տրանսպորտային միջոցները, որոնք ներկրվում կամ արտադրվում են Եվրասիական տնտեսական միության տարածքում (այդ թվում նաև ՀՀ), պետք է համապատասխանեն վերոգրյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին: Արդյո՞ք Ձեր նշած 3 մոդելն էլ ունեն տվյալ (OTTC) համապատասխանությունը: Հիշեցնեմ, որ համաձայն գնումների և մրցակցության պաշտպանության մասին օրենսդրական կարգավորումների, տեխնիկական պահանջ-բնութագրերը պետք է ձևակերպված լինեն այնպես, որ հայտարարված մրցույթին հնարավորություն ունենա մասնակցել ոչ թե 0 կամ 1 հստակ արտադրողի ներկայացուցիչ՝ 1 հստակ մոդելով, այլ 1-ից ավելի արտադրողների ներկայացուցիչներ տարբեր մոդելներով, ինչը կապահովի արդար մրցակցություն

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 1. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 2 Հարգելի գործընկերեր, հարցումների արդյունքում պարզվել է, որ հրավերում սահմանված տեխնիկական բնութագրում առկա են մի շարք վրիպումներ, ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերում կատարվել են մի շարք փոփոխություններ:

2. ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում փոփոխություններ կատարելու մասին

2.1 Հարցումների արդյունքում հայտնի են դարձել, որ տեխնիկական բնութագրում առկա են մի շարք վրիպումներ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց հրավերում կատարել փոփոխություններ, մասնավորապես.

Փոփոխության նկարագրություն. Պարզվել է, որ JAC T9 մոդելի տեխնիկական բնութագիրը մի շարք չափորոշիչներով չի համապատասխանում հրավերում նշված տեխնիկական բնութագրին, ուստի նշված մոդելը հանվել է հրավերից: Արդյունքում կատարվել են հետևյալ փոփոխությունները. **«Փոքրածավալ բեռնատարներ (պիկապներ) կամ MITSUBISHI L200 կամ NISSAN NAVARA կամ JAC T9 ՝ արտադրության տարեթիվը 2025/2026 թվական, Վազքը- Ոչ ավել քան 500 կմ,Շարժիչ 4/16, Աշխատանքային ծավալ առնվազն 2.4 լ, Մաքս. հզորություն առնվազն 149/330 (ձ/ուժ, ն/մ), Փոխանցման տուփ ավտոմատ 6 աստիճան, Արտաքին չափսեր առնվազն 5320x1865x1775մմ,Բեռնախցիկի չափսեր առնվազն 1555x1545x525մմ(ե/լ/խ) ,Անվային բազա 3130մմ,Ճանապարհային լուսածերպ 200 մմ,Նստատեղեր 5,Քաշ առնվազն 1685 կգ,Բեռնատարողությունը առնվազն 1080 լ,Վառելիքի բակի տարողություն առնվազն 75 լ: Երաշխիք և հետերաշխիքային ծառայություն 2 տարի՝ վազքը անսահմանափակ: 4.Մատակարարը Երևան քաղաքում պետք է ունենա պաշտոնական ներկայացուցչություն և պաշտոնական սպասարկման կենտրոն:»** բառերը փոխարինվել են հետևյալ բառերով **«Փոքրածավալ բեռնատարներ (պիկապներ) կամ MITSUBISHI կամ NISSAN կամ Ford կամ Toyota արտադրության, արտադրության տարեթիվը**

2025/2026 թվական, Վազքը - Ոչ ավել քան 500 կմ,Շարժիչ դիզելային,Աշխատանքային ծավալ առնվազն 2.4 լ,Հզորություն առնվազն 149/330 (ձ/ուժ, ն/մ),Փոխանցման տուփ ավտոմատ առնվազն 6 աստիճան,Արտաքին չափսեր առնվազն 5320x1865x1775մմ,Բեռնախցիկի չափսեր առնվազն 1555x1545x525մմ(ե/լ/խ), Նստատեղեր 5,Քաշ առնվազն 1685 կգ,Բեռնատարողությունը առնվազն 1080 լ,Վառելիքի բակի տարողություն առնվազն 75 լ, Երաշխիք և հետերաշխիքային ծառայություն 3 տարի՝ վազքը անսահմանափակ: 4. Մատակարարը Երևան քաղաքում և քաղաքից առավելագույնը 10կմ հեռավորության վրա պետք է ունենա սպասարկման կենտրոն:»

2.2 Գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվել է 2026 թվականի *հունվարի 26*-ը, ժամը՝ *12:00*-ն, իսկ հակադարձ աճուրդը կկայանա՝ 2026 թվականի *հունվարի 27-ին*, ժամը՝ *12:00*-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Արթուր Սարգսյան

անդամներ _____ Աշոտ Բաղդասարյան

_____ Ավագ Սարգսյան

քարտուղար _____ Նվարդ Ավագյան